ԼԻԼԻԹ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մեկնաբանությունն, ինչպես հարցազրույցը, և մեթոդ է, և ժանր: Որպես մեթոդ մեկնաբանությունը գոյություն ունի գրեթե բոլոր ժանրերում, օրինակ լուրի մեջ ուրիշի խոսքը մեջբերելիս, ծանոթության տեսքով, թղթակցության մեջ ներկայացվող երևույթի հեղինակային բացատրության տեսքով, հեղինակի ավարտական մտքի կամ եզրակացության տեսքով: Մեկնաբանության մեթոդը կիրառելի է, երբ թերթի էջերում տեղաբաշխված հրապարակումները փոխադարձաբար լրացնում կամ մեկնաբանում են միմյանց: Ժուռնալիստիկայում «մեկնաբանություն» հասկացությունը սկսել է կիրառվել անցած հարյուրամյակից: Այս ժանրին հարմար նյութերը մեկնաբանել, բացահայտել, քննարկել են կարևորագույն իրադարձությունները: Այժմ ժուռնալիստիկայի հիմնական ժանրերի մեջ մեկնաբանությունը կարևոր տեղ է գրավում: Դրա օգնությամբ հեղինակը իր վերաբերմունքն է արտահայտում հրատապ իրողության հանդեպ, ձևակերպում է դրա հետ կապված խնդիրներն ու հիմնահարցերը սեղմ վերլուծության տեսքով, գնահատում է այն, կանխագուշակում զարգացման հեռանկարը: Մեկնաբանությունը ինֆորմացիոն ժանրերից տարբերվում է վերլուծություն կատարելու ունակությամբ: Իսկ վերլուծական մյուս ժանրերից տարբերվում է նրանով, որ մեկնաբանում է արդեն կատարված, լսարանին քաջ հայտնի երևույթներ և վերլուծությամբ ցույց է տալիս իր վերաբերմունքը երևույթի հանդեպ[1]: Իբրև ժանր մեկնաբանությունն առաջացել է 19-րդ դարի վերջին և 20-ի սկզբին լայն տարածում ունեցող թղթակցության տիպի վերլուծական նյութերից:

Ըստ Վ. Ե. Զյուքսինդի սահմանման, «Մեկնաբանությունը գլխավոր հասկացություն է ժուռնալիստիկայում: Առաջնորդող հոդվածը նույնպես կարող է մեկնաբանություն լինել, մինչև որոշակի աստիճան այն նույնիսկ միշտ է այդպիսին և միայն իր հետևությունների, իր զուգորդությունների և իր մտահղացումների արտահայտման շնորհիվ այն բարձրանում, դառնում է այն, ինչն արդարացնում է նրա բարձր դիրքը պարբերականներում: Իր ավելի փոքր ձևում մեկնաբանությունն ավելի որոշակի է, ինչի մասին վկայում է նրա անվանումը. ժարզաբանող, մեկնաբանող ծանոթագրություն հանրահայտի կամ որպես նորություն թերթի կողմից հայտնած իրադրության վերաբերյալ: Մեկնաբանությունը պետք է.

-բանավեճ սկսի որևէ թեմայի շուրջ

-նոր ընթացք ցույց տա

-որևէ իրադարձության վերաբերյալ վերջնական դատողություն հայտնի՞:

Եվ մեկնաբանությունը, և ինֆորմացիան եղել և մնում են բարձր հրատապության ժանրեր, որոնք արտացոլում են ամենօրյա իրադարձությունները, հաճախ էլ առաջ անցնում դրանցից:

Ժամանակակից մեկնաբանությունն ունի հետևյալ նպատակները.

- *Լսարանի ուշադրությունն հրավիրել հասարակական կյանքում տեղի ունեցող փաստերի վրա:*
- *Մեկնաբանվող նյութերը կապակցել այլ երևույթների հետ, բացահայտել տվյալ երևույթի պատճառներն ու ձևակերպել դրանք:*
- *Ձևակերպել և կանխատեսել մեկնաբանվող իրադարձությունների զարգացումը:*
- *Օրինակների միջոցով հիմնավորել գործողությունների, վարքի միջոցներն ու խնդրի լուծման անհրաժեշտությունը:*

Մեկնաբանությունը միայն նոր երևույթների հանդեպ ռեակցիա չէ: Դրա մեջ պարզ գծագրվում են հիմնահարցերը, քննարկվում են դրանց հետ առնչվող այժմեական փաստերը: Ժանրի ֆունկցիան անքակտելիորեն կապված է դրա առարկայի հետ, որը ծնվում է ամենօրյա ժուռնալիստական պրակտիկայում: Մեկնաբանությունը պատմում է ի հայտ բերված առարկայի փոխկապվածությունների մասին: Դրա օգնությամբ լուծվող հարցերն ուղղված են երևույթի իմաստի ընկալմանը, խնդիրների հրատապ լուծմանը, գործողությունների մղելու: Մեկնաբանությանը հատուկ են «ինչո՞ւ», «իրո՞ք», «ի՞նչ հանգամանքերում», «ո՞ւմ է ձեռնտու», «ինչպիսի՞ն է իրավիճակը», «ինչպե՞ս բարելավել», «ի՞նչ անել», «ի՞նչ տարբերություններ ու հակասություններ կան», «ո՞րն է զարգացման ուղղությունը», «ինչպիսի՞ն են ստրատեգիան ու տակտիկան» և այլ հարցեր: Մեկնաբանություն գրելիս առաջին հերթին պետք է ճիշտ ընտրել նպատակը: Ուստի հեղինակը պետք է հստակ պատասխանի իր իսկ տված հարցերին.

-«Ի՞նչ երևույթ եմ ուզում լուսաբանել», «ի՞նչ եմ պատմելու ընթերցողին», «ի՞նչ գիտելիքներ եմ տալու նրան», «ի՞նչ զգացմունքներ եմ արտահայտելու», «ի՞նչ պատկերացումներ ունեմ ելույթիս առարկայի մասին»,

«ի՞նչ գիտելիքներ ունեմ», «իմ ընդդիմախոսն ի՞նչ դժգոհություններ կարող է հայտնել», «ինչպե՞ս դրանք հաշվի առնել հրապարակման մեջ»:

Մեկնաբանող և մեկնաբանվող փաստերը, դրանց մանրամասները իբրև փաստարկ են ծառայում հօգուտ հեղինակի կողմից առաջ քաշված թեզիսի: Մեկնաբանությունն իրականացվում է հետևյալ հնարքների օգնությամբ.

-ելակետային և մեկնաբանվող փաստերի փոխկապակցվածության մշակում:

-Մեկնաբանվող իրադարձությունների մանրամասնում, այսինքն մանրամասների վերականգնում:

-Փաստերի համեմատում, անալոգիաների մշակում, նախադեպի նկարագրում:

-Զուգահեռների անցկացում:

-Հակադրություն, տեքստերի մեկնաբում, փաստաթղթերի բացատրություն:

Մեթոդի կիրառումից անկախ, մեկնաբանությունն ունի տիպական կառուցվածքային էլեմենտներ, այսինքն մեկնաբանության հիմնական մասեր: Մեկնաբանության կառուցվածքը կապված է ժանրի բնույթի հետ, իսկ նրա կառուցվածքային էլեմենտները պայմանավորված են մեկը մյուսով: Դրանք միասին պետք է տեղ գտնեն մեկնաբանության մեջ: Եթե տեքստի մեջ բացակայում է ելակետային փաստը, պրոբլեմն անծանոթ է մնում ընթերցողին և խնդրի քննարկումը մնում է օդից կախված: Հատուկ դեր ունեն հարցադրումների որակը, դրանց այժմեականությունը, հիմնահարցային լինելը, ճշգրտությունը: Դրանք ազդում են այն փաստարկների վրա, որոնք մեկանաբանում եմ մտքերն ու փաստերը: Լավ մեկնաբանությունը պետք է ունենա հստակ լեզու, հստակ եզրակացություն, այնպես որ ընթերցողն ասի մեկնաբանություններն ավելորդ են: Ասում են, թե ով անհատականի ետևում չի նկատում ընդհանրականը, ծառերի ետևում անտառ չի տեսնում[3]:

Մեկնաբանության որակը կախված է ճիշտ կառուցվածքից, տարբերակները շատ են, բայց պետք է գործի մի սկզբունք այն պետք է նպաստի մեկնաբանվող հիմնահարցը հասկանալի դարձնելուն: Սխեմայի դասական տարբերակը հետևյալն է. փաստ-մեկնաբանություն:

Հայկական թերթերում կարելի է ընթերցել նյութեր, որոնք իրենց վերլուծական-մեկնաբանական բնույթով մոտենում են մեկնաբանության ժանրին, բայց ունեն մի առանձնահատկություն. դրանցում առկա են հեղինակային ծաղրի ու հեգնանքի նրբերանգներ: Այդօրինակ նյութերն ընդունված ժանրային բաժանմամբ կարելի է դասել երգիծական մեկնաբանությունների շարքին: Տեքստի այս տեսակը բացառիկ է: Այն ազգակցական կապ ունի վերլուծական մեկնաբանության հետ: Հաճախ այս տիպի մեկնաբանություններն իրենց սրությամբ հիշեցնում են ռեպլիկ: Սակայն տարբերվում են նման նյութերից և դասվում են գեղարվեստա-հրապարակախոսական ժանրերի թվին, ի շնորհիվ հեղինակի վառ արտահայտված նպատակակետի: Նա նպատակ ունի ծաղրի ենթարկել այն բացառիկ երևույթը, որը գրավել է իր ուշադրությունը: Իր նպատակին հասնելու համար լրագրողը դիմում է իրականության գեղարվեստական իմաստավորման մեթոդներին: Իր մտահղացումն իրականացնելու համար նա կիրառում է սատիրական տիպաբանությունը՝ հեգնանքը, չափազանցությունը, ալեգորիան և այլն[4]:

Երգիծական մեկնաբանություններն այժմ հրապարակվում են շատ այժմեական, առավել անհեթեթ կամ վնասակար գործողությունների, երևույթների հետքերով: Դրանց հերոսները հիմնականում լինում են քաղաքական գործիչներ, իշխանավորներ, կազմակերպություններ, որոնց գործողությունները որոշակի հասարակական հնչեղություն կարող են ունենալ կամ ստանալ:

Հեղինակի համար կարող են հետաքրքրություն ներկայացնել ցանկացած տիպի երևույթներ ու արարքներ, ինչպես նաև տեղեկատվական երևույթներ, օրինակ, ինչ-որ մեկի արտահայտած միտքը: Վստահորեն կարելի է ասել, որ այս ժանրի հիմնադիրը «Արգումենտի ի ֆակտի» շաբաթաթերթն է, որն իր ուշադրության կենտրոնում է պահում Դումայի պատգամավորների, երկրի իշխանությունների, հայտնի չինովնիկների արտահայտած մտքերը: Հայկական մամուլում ևս այս ժանրի նյութերի հանդիպում ենք հիմնականում ընդհմադիր մամուլում «Առավոտ», «Հայկական ժամանակ», «Չորրորդ իշխանություն» և այլն: Այս տիպի մեկնաբանությունները հիմնականում սկսվում են հետևյալ կերպ. սկզբում մատուցվում է որևէ մեկի արտահայտած միտքը, իսկ հետո արդեն ժուռնալիստի մեկնաբանությունը: Երգիծական մեկնաբանության ժանրը կապ ունի և ֆելիետոնի հետ, քանզի սրան ևս հատուկ է մարդկային սխալները, թերությունները ծաղրելը: Երգիծական մեկնաբանությունն օգտագործում է հեգնանքն ու քմծիծաղը, պարսավում կոնկրետ երևույթ, արարք, դեպք. մինչդեռ ֆելիետոնը այնպիսի երևույթներ, որոնք տիպական են, որոնց կարող ենք հանդիպել ամեն բայլափոխի, կյանքի տարբեր ոլորտներում: Կյանքային ընդհանրացման առումով զիջելով ֆելիետոնին՝ այն շահում է հրատապությամբ և անփոխարինելի է գեղարվեստա-հրապարակախոսական ժանրերի շարքում: Երգիծական մեկնաբանությունն ազգակցական կապ ունի սյունակագրության ժանրի հետ, քանզի նրանում էլ առկա են վերլուծության հումորի ու եզրակացության տարրերը: Միայն թե, եթե առաջինը փոքրածավալ նյութ է և հիմնականում անդրադառնում է արդեն հնչած և ծանոթ արտահայտություններին, ապա սյունակը քննարկում է հիմնահարց՝ իր հետ բերելով հասարակության համար անհայտ նորույթ:

Մեկնաբանությունը երբեմն կոչվում է նաև մեկնաբանական հոդված, քանի որ սերտ ազգակցական կապեր ունի հոդվածի ժանրի հետ: «Հոդված» բառն առաջացել է լատիներեն «articulus» բառից, որ նշանակում է անդամ, ամբողջի մաս: Դրանով է պայմանավորված, որ ցանկացած նյութ, որը պետք է տեղ գտնի թերթում, այսինքն՝ կազմի նրա մի մասը, անվանվում է հոդված: Հոդված են կոչում նաև ոչ փոքրածավալ նյութերից շատերը: Սակայն այն, որպես ժանր, ենթադրում է իրադարձությունների, գործընթացների ու հիմնախնդիրների խորը վերլուծություն, դրանցում պատճառների ու հետևանքների բացահայտում, փաստարկում, հիմնավորում և եզրահանգում: Այն վերլուծական խմբի կարևորագույն ժանրերից է: Ավելի ստույգ, հոդվածը կարելի է

բնութագրել իբրև ժանր, որը վերլուծում է հասարակության համար մեծ նշանակություն ունեցող և արդիական իրադրություններ, երևույթներ և դրանց կարգավորում ու կառավարում[4]: Հոդվածի առանձնակի ֆունկցիան այն է, որ լսարանին բացատրում է երևույթի հասարակական նշանակությունը, բացահայտում պատճառներն ու հետևանքները, վեր հանում այն բոլոր իրադրությունները, որոնք կարող են առաջանալ որպես հետևանք, վերլուծում է մասնակից կողմերի շահագրգռվածության աստիճանը, որը առաջին հայացքից կարող է աննկատ մնալ: Հաջողված հոդվածը ստեղծում է իրական պատկերացում հիմնախնդրի վերաբերյալ և լսարանին մղում է ակտիվ խորհրդածություններ և գործնական քայլերի: Հոդվածը պետք է դիմի ամբողջ հասարակությանը, ոչ թե նրա միայն մի մասին[5]:

Առանձնանում են հոդվածի մի քանի տեսակներ: Դրանցից է - վերլուծական հոդվածը: Սա հիմնականում անդրադառնում է արդյունաբերության, գյուղատնտեսության, գիտության ու տեխնիկայի գործնական հարցերին: Սրանցում քննարկվում են գիտության, սպորտի կամ արդյունաբերության որևէ ճյուղին առնչվող կոնկրետ հարցեր, հիմնախնդիրներ, իրադրություններ և այլն: Հոդվածում ժուռնալիստի կոչումն է իրավասու մարմինների ուշադրությունը սևեռել առկա խնդիրների վրա, առաջարկել լուծման տարբերակներ, բայց ոչ երբեք փորձել լուծել դրանք[6]: Հիշենք, որ ժուռնալիստը ոչ դատավոր է, ոչ դատախազ, նա իրավունք չունի պատիժ նշանակել որևէ մեկին, նա կարող է միայն ապացուցել անձի մեղավորությունը փաստերով և միայն այդքանը: Նշենք, որ հայկական մամուլում հոդվածների գերակշիռ մասը քաղաքական թեմայով է և ավելի մոտ է բանավիճային հոդվածի ժանրին: Այստեղ հեղինակի խնդիրն է բացահայտել իրադրության պատճառները, գնահատել այն, անվանել այն հարցերը, որոնք խանգարում են դրա լուծմանը, առաջարկել լուծման լավագույն ճանապարհը, հիմնավորել այն ու կոնկրետ քայլերի խորհուրդներ տալ: Հիմնահարցային հոդվածի նախապատրաստությունը սկսվում է հիմնախնդրի ուսումնասիրությամբ, հնարավորի ու ցանկալիի միջև հակասությունների բացահայտմամբ: Ժուռնալիստը պետք է առանձնակի հետաքրքրվի իրադրությունում առկա մարդկային գործոնի դերով ու նշանակությամբ ովքե՞ր են գործող անձինք, ի՞նչ են արել նրանք հարցի լուծման համար, եթե ոչինչ չեն արել, ապա ինչո՞ւ, ինչո՞ւ նրանք վարվել են հենց այդպես և ոչ այլ կերպ, ով ում հետ և ում դեմ է պայքարում, ում է ինչ ձեռնտու և այլն: Երբեմն մամուլում հայտնվում են հիմնահարցային կոչված հոդվածներ, բայց դրանք հաճախ իրականում այդպիսին չեն լինում, քանզի քննարկում են ոչ թե պրոբլեմ, այլ պրոբլեմոիդ «Ինչու՞ Մոյիսեևը դուր չի գալիս Ժիրինկին», «Ինչպե՞ս դառնալ սևահեր», «Ինչպե՞ս մարդկությանը դարձնել երջանիկ» և այլն: Այս խնդիրները, հասկանալի է, հասարակական մեծ նշանակություն չունեն: Զյուսգերը նշում է. «Հոդվածը պետք է հետաքրքրի ոչ թե հասարակության մի մասին, այլ ողջ

հասարակությանը»[7]: Ինչքան շատ մարդկանց է առնչվում հիմնախնդիրը, այնքան այն ավելի կարևոր է: Տարածված է այն կարծիքը, թե ճիշտ հարցադրումն արդեն հոդվածի հաջողության գրավական է: Դա պարտադիր նախապայման է, բայց ոչ բավարար լիարժեք վերլուծական նյութ գրելու համար: Կարևոր են նաև հիմնահարցային իրադրության նկարագրությունն ու գնահատականը, հիմնահարցի առաջացման պատճառների բացահայտումը, լուծման ճանապարհների առաջարկումը: Հոդվածի մեկ այլ տեսակ է կազմում բանավիճային հոդվածը: Սրանք հրապարակվում են մեծամասամբ այն ժամանակ, երբ որևէ նշանակալի հիմնախնդրի շուրջ հասարակության մեջ առաջանում են վեճեր: Այդպիսի վեճերը հաճախակի են դառնում, օրինակ, ընտրությունների ժամանակ: Պալեմիկ հոդվածի համար առիթ են դառնում հակադիր կողմերի, քաղաքական ընդդիմադիրների ելույթները: Ժուռնալիստն այստեղ իր առջև դնում է երկու խնդիր՝ վիճելի հարցի շուրջ հաստատել սեփական կարծիքը և հերքել ընդդիմադիր կողմի տեսակետը: Սա, իհարկե, չի կարող չանդրադառնալ նյութի կառուցվածքի ու բովանդակության վրա: Լրագրողն ընտրում է միայն այն փաստերը, որոնք հաստատում ու ապացուցում են իր հայացքների ճշմարտացիությունը: Նրա հրապարակումը պետք է լինի անհակասական: Սա, թերևս, պալեմիկ հոդվածի գլխավոր առանձնահատկությունն է: Ապացուցողական քննարկումների միջոցով հեղինակը մի կողմից փաստարկներ է բերում հօգուտ իր առաջադրած թեզիսի, մյուս կողմից դրանք օգտագործում է ընդդիմադիր կողմին հակասելու, ժխտելու նպատակով: Հիշեցնենք, որ փաստը ստույգ իմացությունն է այն բանի, որը ստույգ իրողություն է: Գնահատականը վերաբերմունքն է փաստի նկատմամբ, այսինքն՝ ինչքանո՞վ է նրա գոյությունը դրական կամ բացասական մեր կամ որևէ մեկի նկատմամբ: Կանխատեսումը անհստակ իմացությունն է այն բանի, թե արդյո՞ք տեղի ունեցել է դեպքը, իրողությունը, թե՞ ոչ, կամ այն ինչքանո՞վ կարող է դրական կամ բացասական անդրադառնալ հասարակության վրա:

---

[1] А. Е. Тертичный, Жанры переодической печати, Москва, 2000, ст 83.
[2] Վերներ Մայեր, Լրագրային գործ, հատոր 1, «Վան Արյան», Եր, 2001, էջ 157:
[3] Журналист, 11. 1999. ноябрь, ст. 47.
[4] Е П. Прохопов, Введение в теорию журналистики, Рио – Холдинг, 1998, ст. 126.
[5] Վերներ Մայեր, Լրագրային գործ, հատոր 1, «Վան Արյան», Եր., 2001. էջ 159:
[6] А. Е Тертичный, Жанры переодической печати, Москва, 2000, ст.83.
[7] В.В Ворошилов, Журналистика, Санкт – Петербург, 1999, ст. 86.